

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 8

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2020-2021 ուս. տարվա  
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

07 հուլիսի 2021թ.

*Ներկա էին՝* գիտխորհրդի 24 անդամներից 19–ը (ներկայաթերթիկը կցված է):

*Նախագահ՝* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյան

*Գիտական քարտուղար՝* ք.գ.թ. Ա. Դադայան

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքների քննարկում: Ձեկուցող՝ Ս. Վարդապետյան
2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաթեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Անի Դադայանի և Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոլոգիայի ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Ավետիս Ծատուրյանի դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը: Ձեկուցող՝ Ա. Սադյան
3. Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Տաթևիկ Սարգսյանի կողմից ներկայացված «Օրգանիզմի էներգածախսի որոշման, որոշ կաթնամթերքների էներգետիկ արժեքի և որակի գնահատման ու վերահսկման մեթոդները» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը: Ձեկուցող՝ Ա. Դադայան
4. Ընթացիկ հարցեր:
  - 4.1 ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի կողմից անցկացվող Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոլոգիայի ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Ավետիս Ծատուրյանի կողմից ներկայացված «Դեղերի և կենսաբանորեն ակտիվ հավելումների որակի հսկման ժամանակակից մեթոդների մշակում, ներդրում և վալիդացում» վերնագրով հայտի երաշխավորման հարցը: Ձեկուցող՝ Ա. Ծատուրյան

## ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

### 1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքների քննարկում:

**Լսեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն Ս. Վարդապետյանին, ով նշեց, որ 2020-2021 ուսումնական տարում ևս հաջողությամբ կարողացան կազմակերպել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների անցկացումը: Ս. Վարդապետյանը ներկաներին հիշեցրեց, որ 2020-2021 ուս. տարում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահը ԵՊԲՀ Ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ, դեղ.գիտ. դոկտոր Նաիրա Բաբկենի Չիչոյանն էր, ով փաստում է, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններն ընթացել են բարձր մակարդակով, լավ կազմակերպված և բոլոր պահանջներին համապատասխան: Հատկապես պետք է նշել պաշտպանության ներկայացված ավարտական աշխատանքների արդիականությունը, կիրառական նշանակությունը՝ հայրենական դեղագործության համար և կատարման բարձր որակը: Ն Չիչոյանի կարծիքով Ֆարմացիայի ինստիտուտում մշտապես կատարվում է անհրաժեշտ աշխատանք՝ ուսման բարձր որակ և մրցունակ կադրեր պատրաստելու ուղղությամբ:

Ս. Վարդապետյանը հաղորդեց, որ մագիստրոսական թեզերի պաշտպանություններին մասնակցել են 63 ուսանող, որոնցից 19-ը ստացել են գերազանց, 31-ը՝ լավ, 13-ը՝ բավարար գնահատական: Բողոքարկումներ չեն եղել: Ավարտական աշխատանքների պաշտպանություններին մասնակցել են 56 շրջանավարտ, որոնցից 5-ը՝ օտարերկացի: Ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքում 17 ուսանող ստացել են գերազանց, 28-ը՝ լավ, 11-ը՝ բավարար գնահատական: Անբավարար գնահատականներ և բողոքարկումներ չեն եղել:

«Քիմիա/ դեղագործական քիմիա» մասնագիտության ավարտական աշխատանքների պաշտպանություններին մասնակցել են 57 շրջանավարտ,

որոնցից 9-ը ստացել են գերազանց, 30-ը՝ լավ, 18-ը՝ բավարար գնահատական: Բողոքարկման արդյունքում գնահատականի փոփոխություն չի եղել:

- Ինչ կարծիքներ կա՞ն այս հարցի վերաբերյալ:

**Ելույթ ունեցան՝** ք.գ.դ., Ռ. Հովհաննեսյանը, ք.գ.թ. Հ. Միմոնյանը, ք.գ.թ. Կ. Պետրոսյանը ովքեր նշեցին, որ և՛ ուսանողները և՛ պաշտպանությունների հանձնաժողովի անդամները գոհ են արդյունքներից: Գիտխորհրդի մյուս անդամները ևս միաձայն փաստեցին որ պաշտպանություններն ընթացել են լավ կազմակերպված և առողջ մթնոլորտում:

Ա. Սաղյանը հորդորեց ամբիոնների վարիչներին շարունակել իրենց հետևողական աշխատանքը՝ սահմանված ժամկետների պահպանման, նախապաշտպանությունների պատշաճ կազմակերպման հարցում:

**Որոշեցին՝** (միաձայն) դրական գնահատել 2020-2021 ուս. տարում անցկացված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքները:

**2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաթեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Անի Դադայանի և Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Ավետիս Ծատուրյանի դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը:**

**Լսեցին՝** Գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանին, ով ներկայացրեց դոցենտի կոչման հավակնորդներ Ա.Ս. Դադայանի և Ա.Հ. Ծատուրյանի անձնական գործերը:

2.1. Ա. Սաղյանը հաղորդեց, որ Անի Դադայանի գիտամանկավարժական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը բավարարում են ՀՀ ԲՈԿ-ի կողմից դոցենտի կոչման համար ներկայացվող պահանջներին: Ա.Ս. Դադայանը դասախոսություն է կարդում «Ֆարմաթեխնոլոգիա-1 (գործարանային)» առարկայից, ղեկավարում է ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր: Ա. Դադայանը հեղինակ է 27 գիտական հոդվածների որոնցից 4-ը՝ բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում: Վերջին երեք տարում հրատարակել է 4 գիտական հոդված և 1 ուսումնամեթոդական աշխատանք:

**Ելույթ ունեցան՝** դոցենտներ Ա. Մկրտչյանը, Կ. Պետրոսյանը և Ֆարմացիայի ինստիտուտի փոխտնօրեն ք.գ.թ. Ս. Վարդապետյանը: Նրանք նշեցին, որ Անի Դադայանը բացի մանկավարժական գործունեություն ծավալելը հանդիսանում է նաև Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի քարտուղարը: Ելույթ ունեցողները նշեցին, որ Ա. Դադայանը աշխատասեր և պրպտող գիտնական է, լավ մանկավարժ և արժանի է կրելու դոցենտի կոչում:

2.2. Ա. Սադյանը տեղեկացրեց, որ որ դոցենտի կոչման հավակնորդ Ա.Հ. Ծատուրյանի գիտամանկավարժական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը ևս բավարարում են ՀՀ ԲՈԿ-ի կողմից դոցենտի կոչման համար ներկայացվող պահանջներին: Ա.Հ. Ծատուրյանը դասախոսություն է կարդում «Դեղանյութերի ուսումնասիրման մեթոդներ» առարկայից: Նա ղեկավարում է ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր: Ա. Ծատուրյանը հեղինակ է 22 գիտական հոդվածների որոնցից 5-ը՝ բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում: Վերջին երեք տարում հրատարակել է 4 գիտական հոդված և 1 ուսումնամեթոդական աշխատանք:

**Ելույթ ունեցան՝** Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ Հ. Սիմոնյանը և Ֆարմացիայի ինստիտուտի փոխտնօրեն ք.գ.թ. Ս. Վարդապետյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ Ա. Ծատուրյանը աշխատասեր և պարտաճանաչ անձնավորություն է, բանիմաց գիտնական, լավ մանկավարժ և արժանի է կրելու դոցենտի կոչում:

**Որոշեցին՝** Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ ք.գ.դ. Ռ. Հովհաննեսյան, անդամներ՝ կ.գ.թ. Ն. Հովհաննիսյան և Է. Մարկոսյան:

Ընտրություններից հետո գիտական խորհուրդը (նիստին մասնակցում էին խորհրդի 24 անդամներից 19-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, համաձայն որի, փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել էին խորհրդի 19 անդամներ:

Անի Սլավիկի Դադայանի դոցենտի կոչում շնորհելուն կողմ էր քվեարկել 19 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 0 քվեաթերթ: Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանի

դոցենտի կոչում շնորհելուն կողմ էր քվեարկել 19 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 0 քվեաթերթ:

Խորհուրդը բաց քվեարկությամբ հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և երաշխավորեց Ա.Ս. Դադայանին (ԺԵ.00.01- «Դեղագիտություն») և Ա.Հ. Ծատուրյանին՝ (Բ.00.10- «Կենսօրգանական քիմիա») դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու համար:

- 3. Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Տաթևիկ Սարգսյանի կողմից ներկայացված «Օրգանիզմի էներգաձախսի որոշման, որոշ կաթնամթերքների էներգետիկ արժեքի և որակի գնահատման ու վերահսկման մեթոդները» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը:**

**Լսեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի քարտուղար Անի Դադայանին, ով հաղորդեց, որ Տաթևիկ Սարգսյանի կողմից ներկայացված աշխատանքը ենթարկվել է ինչպես ներամբիոնային, այնպես էլ՝ արտաքին գրախոսման՝ ԵՊԲՀ: Արտաքին գրախոսները (ԵՊԲՀ հիգիենայի և էկոլոգիայի ամբիոնի դոցենտներ Բ.գ.դ. Ա. Քոթանյանը և ք.գ.թ. Ս. Սկրտչյանը) կարևորել են ուսումնական ձեռնարկի անհրաժեշտությունը և կրկնակի գրախոսությունից հետո այն երաշխավորել են տպագրության:

**Որոշեցին՝** (միաձայն) հաշվի առնելով վերոհիշյալ աշխատանքի անհրաժեշտությունն ուսումնական գործընթացի համար՝ այն թույլատրել տպագրության (100 օրինակ տպաքանակով) համալսարանի միջոցների հաշվին:

#### **4. Ընթացիկ հարցեր:**

- 4.2 ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի կողմից անցկացվող Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոլոգիայի ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Ավետիս Ծատուրյանի կողմից ներկայացված «Դեղերի և կենսաբանորեն ակտիվ հավելումների որակի հսկման ժամանակակից մեթոդների մշակում, ներդրում և վալիդացում» վերնագրով հայտի երաշխավորման հարցը: Զեկուցող՝ Ա. Ծատուրյան**

**Հսեցին՝** ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանին, ով ներկայացրեց «Դեղերի և կենսաբանորեն ակտիվ հավելումների որակի հսկման ժամանակակից մեթոդների մշակում, ներդրում և վալիդացում» վերնագրով թեման և պատասխանեց ներկաների հարցերին:

**Որոշեցին՝** (միաձայն) երաշխավորել Ա. Ծատուրյանի կողմից ներկայացված հայտը՝ վերը նշված մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Գիտական խորհրդի նախագահ՝  
տնօրենի պաշտոնակատար,  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան